

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/61 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
 ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	Ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
56	-	-	-	<p>Հավաքածուն նախատեսված է կենսաբանական նմուշներից ԴՆԹ-ի արագացված անջատման համար և պետք է բաղկացած լինի երկու հիմնական բաղադրիչներից՝ լիզիսի ռեագենտից և չեզոքացնող բուֆերից: Լիզիսի ռեագենտը (Lysis Reagent) պետք է ունենա հիմնային pH միջավայր և նախատեսված լինի բջջային թաղանթների ջերմաքիմիական քայքայման համար, իսկ չեզոքացնող բուֆերը (Neutralisation Buffer) պետք է ապահովի լուծույթի pH-ի կայունացումը հետագա PCR հետազոտությունների համար: Հավաքածուն պետք է հնարավորություն տա իրականացնել ԴՆԹ-ի էքստրակցիա առանց սպիտակուցների ֆերմենտատիվ մշակման, ցենտրիֆուգման կամ սյունակային ֆիլտրացիայի կիրառման: Մեկ նմուշի մշակման ընդհանուր</p>

				<p>Ժամանակը չպետք է գերազանցի 20 րոպեն, որից 10-ից 15 րոպեն պետք է կազմի ջերմային մշակման փուլը 95°C ջերմաստիճանում: Ռեագենտները պետք է տեղադրված լինեն հերմետիկ փակվող պոլիմերային սրվակների մեջ, որոնք պահպանում են իրենց քիմիական հատկությունները +4°C-ից մինչև -20°C ջերմաստիճանային պայմաններում: Հավաքածուի ծավալը պետք է բավարար լինի առնվազն 50 կամ 100 նմուշի մշակման համար՝ կախված կոնկրետ թողարկման ձևից: Ստացված էքստրակտը պետք է պիտանի լինի անմիջապես որպես մատրիցա օգտագործվելու համար՝ պոլիմերազային շղթայական ռեակցիայի (PCR) տարբեր արձանագրություններում: Մատակարարման պահին մնացորդային ժամկետը առնվազն 2 տարի Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը ազատված է ավելացված արժեքի հարկից, քանի որ ձեռք է բերվելու Appear project 373 Armenia ծրագրի շրջանակներում: (տեղեկանքը կցվում է)</p>
--	--	--	--	---





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БНЗ-ЕЦΔΥΠΖΡ-26/61 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
56				